


**Թորոնթօյի Նորթ Եորքի**

**Հայց. Առաք. Եկեղեցի**

ԱՐԵՂԵԿԱ ԱՌՈՒՌՈՒԹԻՒՆ  
ԱԵԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

1982



27 Սեպտ. 1982

Թօրօնթօ

Բարձրաշնորհ

Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան

Առաջնորդ Հիւս. Ամերիկայի եւ Գանատայի եւ

Նախագահ Թեմական Խորհուրդի

Նիւ Եորք

Բարձր. Սրբազան Հայր

Թօրօնթոյի նորթ Եորք թաղամասի նորակազմ ծուխը իր առաջին ծխական ժողովը գումարեց Կիրակի 26 Սեպտ. 1982 կ. ե. ժամը 4.00-ին Սէյնթ Լորընս Մարթիր Հոմէական եկեղեցւոյ ներքնասրահին մէջ նախագահութեամբ Տ. Գեղամ Ժ. Վրդ. Զաքարեանի: Ներկայ էին 66 տրատու անդամներ որոնց թիւը քարձրացաւ 76-ի: Ժողովի Ատենապետ ընտրուեցաւ Բարշ. Գրիգոր Սրկ. Զմրուխտեան, Գայերէնի քարտուղար Տիկ. Լուիզ Գասապեան եւ անգլերէնի քարտուղար Օրդ. Աստղիկ Քէօշկէրեան:

Ներփակ կուղարկենք ծխական Խորհուրդի վեցամսեայ քարոյական տեղեկագիրը, տնտեսական համարատուութիւնը եւ ծխական ժողովի ատենագրութիւնը:

Գաղտնի քուէարկութեամբ ժողովը ծխական Խորհուրդի անդամներ ընտրեց.-

- 1.- Օննիկ Թորոսեան 71 քուէ
- 2.- Անդրանիկ Զաքարեան 70 քուէ
- 3.- Վահրամ Զիչէքճի 66 քուէ
- 4.- Լուիզ Գասապեան 62 քուէ
- 5.- Վահան Մուրատեան 61 քուէ
- 6.- Դաւիթ Վարժապետեան 48 քուէ
- 7.- Ղազարոս Պօյաճեան 45 քուէ
- 8.- Գեղամ Քէրէսթէճի 38 քուէ
- 9.- Ժիրայր Մարտիրոսեան 30 քուէ

Առաջին հինգը երկուայ տարուայ եւ վերջին չորսը մէկ տարուայ շրջանի համար:

~~Թեմական Խորհուրդի~~

Անձնափոխանորդ ընտրուեցաւ Յովսէփ Գանգուրեան 26 քուէ:

Թեմական Պատգամաւոր ընտրուեցան.-

1.- Աստղիկ Քէօշկէրեան 54 քուէ

2.- Պարզեւ Դաւիթեան 41 քուէ

Երկուքն ալ չորս տարուայ շրջանի համար:

Երեսփոխանի անձնափոխանորդ ընտրուեցաւ Հիլտա Զաքարեան 19 քուէ:

Ջայս հաղորդելով Ձերդ Սրբազնութեան ի նկատառումն եւ ի վաւերացումն:

Վերոյիշեալ ժողովի մէջ նաեւ ծուխին անուն մը դնելու հարցը եւս նկատի առնուեցաւ եւ զաղտնի քուէարկութեամբ անդամներ յարմար նկատեցին հետեւեալ եօթը անունները.-

Ս. Խաչ, Ս. Գէորգ եւ Ս. Գեղարդ

Ջայս հաղորդելով Ձերդ Սրբազնութեան եւ Պատուարժան Թեմական Խորհուրդիդ ուշադրութեան կը յուսանք մօտ ասպագային ստանալ Ձեր ընտրութիւնը եկեղեցւոյ անուան համար:

Սրբազան հայր

Առ ի գիտութիւն կուզէինք յայտնել նաեւ թէ նոյն ժողովի մէջ Հաշուէքննիչ Յանձնախումբի անդամ ընտրուեցան Գրիգոր Մուշեան, Յակոբ Զմրուխտեան եւ Հիլտա Զաքարեան, իսկ Ընտրական Յանձնախումբի անդամներ ընտրուեցան Սարգիս Աւագեան, Արսէն Գասապեան եւ Անդրանիկ Թորոսեան:

Որդիական խորին յարգանքով

*Գեղամ Ժ. Վրդ.*

Գեղամ Ժ. Վրդ. Զաքարեան  
Նախագահ

*Գրիգոր Սրկ. Զմրուխտեան*  
Գրիգոր Սրկ. Զմրուխտեան  
Ատենապետ

Լուիզ Գասապեան  
Ատենադպրուհի

*Լուիզ Գասապեան*

Ա Ց Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա . ԱՆՊԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ - ԿԻՐ . 26 ՍԵՊՏ . 1982



Թորոնթոյի Նորթ Եորքի Հայաստանեայց Եկեղեցիի տարեկան Անդամական Առաջին Ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, 26 Սեպտեմբեր 1982, կ.ե.ժամը 4-ին, Ս. Լօրենս - Մարթիր եկեղեցւոյ սրահին մէջ նախագահութեամբ Գերապատիւ Տ.Գեղամ Ծայրագոյն Վարդապետ Զաքարեանի, ի ներկայութեան բաւարար թիւով տրատու անդամներու:

ԲԱՅՈՒՄ ԺՈՂՈՎԻ

Նախագահ Հայր սուրբը Աղօթքով կատարեց ժողովի բացումը եւ հրաւիրեց Միական Խորհուրդի Ատենապետ Տիար Օննիկ Թորոսեանը բացման խօսքն արտասանելու:

Տիար Օննիկ Թորոսեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ շնորհակալութիւն յայտնեց Հիւսիսային Ամերիկայի Թեմական Խորհուրդին, Սրբազան Առաջնորդ Տ.Թորգոմ Արքեպս.Մանուկեանի, որ զօրավիզ հանդիսացաւ մեր եկեղեցիին, հիմնադրութեան օրէն սկսեալ, առանց բացսուռութեան ամէն Կիրակի մեզի դրկելով կարող հոգեւորականներ, մեր մօտ Ս.Պատարագ մատուցանելու եւ քարոզելու ի միխթարութիւն հաւատացեալ ժողովուրդին: Տիար Թորոսեան խօսեցաւ եկեղեցիի բարի նպատակներուն եւ ազգօգուտ գործունէութեան մասին, վեր առնելով եկեղեցւոյ առաջին շրջաբերականին մէջ այն խօսքը, թէ մեր եկեղեցին եւս, ըստ Հայաստանեայց Եկեղեցւոյ դաքաւոր աւանդութեանց, ժողովուրդին պիտի ջամբէ հոգեւոր դաստիարակութիւն, անոր սիրտին մէջ պահպանելով եւ զարգացնելով եղբայրութեան եւ համերաշխութեան ըզգացումները, եւ համագործակցութեան գաղափարը բոլոր քոյր եկեղեցիներու, ազգային կազմակերպութեանց եւ մշակութային հաստատութեանց հետ, յարգելով իւրաքանչիւրին գաղափարական, ընկերաբարոյական եւ քաղաքակրթչական սկզբունքները: ,, Եկեղեցի սկսիլը չի նշանակեր գործունէութեանց վերջակէտը, այլ գործունէութեանց սկիզբը,, ըսաւ Տիար Թորոսեան:

Ժողովը բացուած ժամանակ ներկայ էին 66 տրատու անդամներ, որոնց ներկայութիւնն ու իրաւասութիւնը մէկիկ մէկիկ ճշդեց Գանձապահ Տիար Անդրանիկ Զաքարեան: Ներկաներու այս թիւը բաւարար էր ժողովը օրինաւոր համարելու, ըստ Ամերիկահայ Թեմերու կանոնադրութեան: Աւելի ուշ, Նոր անդամներ եկան ժողովասրահ եւ իրաւասու ժողովականներու թիւը հասաւ 76-ի:

ՕՐՈՒԱՆ ԳԻՒԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Օրուան Դիւանի ատենապետութեան համար առաջարկուեցաւ Բրշ.Գրիգոր Ա.Սրկ.Զմբրուխտեանը: Առաջարկը երկրորդուեցաւ եւ ապա միաձայնութեամբ ընդունուեցաւ: Նոյն ձեւով առաջարկուեցաւ եւ ընդունուեցաւ Տիկ. Լուիզ Գասապեանը որպէս հայերէնի Ատենադպրուհի եւ Օր.Աստղիկ Բէօշկէրեանը որպէս անգլերէնի Ատենադպրուհի:

Օ Ր Ա Կ Ա Ր Յ

Ատենապետ Ջմրուխտեան Ա.Սրկ. ժողովականներէն խնդրեց ժողովականութեան կարգը պահպանել, հարցումներն ու խօսքերը ուղղելով Ատենին, առանց քովնտի խօսակցութիւններու եւ ընդմիջումներու: Ապա կարդաց օրակարգը.-

1. Աղօթք եւ բացման խօսք
2. Ներկայ անդամներու ճշդում
3. Օրուան դիւանի ընտրութիւն
4. Վարչական եւ նիւթական տեղեկատուութիւն
5. Հայեցի անուանակոչութիւն Նորթ Եորքի Հ.Ա.Եկեղեցիի
6. Ընտրութիւններ
  - ա. Միական Խորհուրդի
  - բ. Թեմական Պատգամաւորներ
  - գ. Հաշուեքննիչ Մարմին
  - դ. Ընտրողական Յանձնախումբ
7. Նոր նիւթեր
  - ա. Կազմութիւն Տիկնանց Յանձնախումբի
  - բ. Կիրակնորեայ Դպրոց
  - գ. Երիտասարդաց Մարմին
8. Փակում ժողովի եւ Աղօթք

Տիար Պ.Մուշեան առաջարկեց օրակարգն ընդունիլ եղածին պէս: Առաջարկը երկրորդութեամբ տիար Ա.Գասապեանի կողմէ եւ ընդունուեցաւ:

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒ ՆՈՒԹԱԿԱՆ ՀԱՇՈՒՅՏՈՒՈՒԹԻՒՆ

Ատենադպիր տիար Վահան Մուրատեան կարդաց Եկեղեցւոյ եւ Միական Խորհուրդի Վեցամսեայ գործունէութեան տեղեկագիրը: Կատարուեցաւ նիւթական հաշուետուութիւն ԲՐԸ Զմբուխտեան Ա.Սրկ.ի կողմէ:

Ատենապետը հրաւեր ուղղեց ժողովականներուն արտայայտուիլ բարոյական եւ նիւթական այս տեղեկատուութեանց մասին: Տիար Արսէն Գասապեան առաջարկեց ընդունուած դաւանիլ այս տեղեկատուութիւնները. տիար Սարգիս Աւագեան երկրորդեց:

Խօսք առաւ տիար Պետրոս Մուշեան. ան շնորհաւորեց տեղեկատուութիւնները եւ գնահատեց Միական Խորհուրդի յարաբերաբար բեղուն գործունէութիւնը. ակնկալուածէն աւելին իրականացուած է, ըսաւ ան, եւ թարգման հանդիսանալով հաւատարմեամբ ժողովուրդի զգացումներուն եւ մտածումներուն, շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր եւ կեդրոնական Թեմական Խորհուրդին, Եկեղեցիիս ընծայուած օժանդակութեանց եւ հոգածութեան համար: «Յարաբերաբար կարճ եւ դժուարին այս ժամանակամիջոցին, Միական Խորհուրդը առաւելագոյն յաշտութեամբ դուրս եկած է գործերէն», եզրակացուց պ. Մուշեան:

ԵԿԵՂԵՑԻՍ ԱՆՈՒՆԸ

Ժողովը անցաւ յաջորդ նիւթին, որ էր Նորթ Եորքի Հայց.Առաք. Եկեղեցւոյ Հայեցի անուանակոչումը: Ըստ Առաջնորդ Սրբազան Հօր Թելադրանքին, պիտի առաջարկուէր երեք անուն, որմէ մէկը պիտի ընտրուէր Թեմական Խորհուրդին կողմէ եւ վաւերացուէր:

Առաջարկուեցան հետեւեալները.-

1. Ս.Նահատակաց առաջարկող Պ.Դաւիթեան, երկրորդող Պ.Մուշեան

2. Ս.Խաչ	առաջարկող	Տիկ.Չ.Պոյանեան,	երկրորդող	Գ.Վարժապետեան
8. Ս.Գեղարդ	..	Պ.Մուրադեան	..	Պ.Դաւիթեան
4. Ս.Գէորգ	..	Ա.Գասապեան	..	Ա.Աւագեան
5. Ս.Յարութիւն	..	Պ.Միննէթեան	..	Ա.Գասապեան
6. Ս.Եղիա	..	Պ.Դաւիթեան	..	Ա.Բէօշկէթեան
7. Ս.Նշան	..	Պ.Միննէթեան	..	Ա.Գասապեան

Այս անուններուն շուրջ տեղի ունեցաւ գաղտնի քուէարկութիւն: Քուէ-  
ախոյզներ - Տ.Գեղարդ Մ.Վ.Զաքարեան, Տ.Սեղրաք ԲՆ.Խաչատուրեան եւ Պ.Մուշ-  
եան: Ստացուեցաւ հետեւեալ արդիւնքը.-

Ս. Խաչ	42 քուէ
Ս. Գեղարդ	21 ..
Ս. Գէորգ	20 ..

Մօ.Գ.Վարժապետեանի առաջարկով եւ Օր.Աստղիկ Բէօշկէթեանի երկրոր-  
դումով փակուեցաւ անուանակոչութեան քուէարկութիւնը:

**ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ**

Ձեռնարկուեցաւ նոր Ծխական Խորհուրդի անդամներուն ընտրութեան,  
գաղտնի քուէարկութեամբ:

Քուէարկուներուն յանձնուեցաւ թեկնածուներու անուանացանկ մը, ո-  
րուն վրայ գաղտնաբար նշանակուելով պիտի կատարուէր ընտրութիւնը:  
Քուէախոյզներ - Տոքթ.Մ.Ժամկոչեան, Օր.Բ.Թորոսեան, Օր.Բ.Թորոսեան,  
~~Օր.Բ.Թորոսեան~~

Ստացուեցաւ հետեւեալ արդիւնքը.-

Օննիկ Թորոսեան	74 քուէ
Անդրանիկ Զաքարեան	70 ..
Վահրամ Զիչէքճի	66 ..
Հուիզ Գասապեան	62 ..
Վահան Մուրադեան	61 ..
Դաւիթ Վարժապետեան	48 ..
Ղազարոս Պոյանեան	45 ..
Գեղամ Բերեսթէճեան	88 ..
Ժիրայր Մարտիրոսեան	80 ..
Յովսէփ Գանգուրեան	26 ..

Կոխարկուող

Այս անուններէն առաջին հինգը Ծխական Խորհուրդի անդամ կը դառնան  
երկու տարուան համար: Յաջորդ չորս հոգիները - մէկ տարուան համար: Իսկ  
տասներորդը կը նկատուի պահեստի անդամ, նախատեսելով հաւանական բացակա-  
յութիւն կամ պակսում ինը: Հիմնական անդամներէն:

**ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՅԱՐԱԿԻՑ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ**

Գաղտնի քուէարկութեան վերոյիշեալ եղանակով տեղի ունեցան ընտրու-  
թիւնները:

ա. ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՃԱՆՈՒՄԻ, հետեւեալ անդամներով.

Անդրանիկ Թորոսեան	68 քուէ
Սարգիս Աւագեան	62 ..
Արսէն Գասապեան	49 ..

բ. ՀԱՇՈՒԾՔՆԻՉ ՄԱՐՄԻՆ, հետեւեալ կազմով.

Հիւ տա Չաքարեան	64	քուէ
Գրիգոր Մուշեան	56	..
Յակոբ Չմբուխտեան	88	..

գ. ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԽՈՐՆԵՐ, հետեւեալ ազգայիններով.

Աստղիկ Բէօշկէրեան	54	քուէ
Պարգեւ Դաւիթեան	41	..
Հիւ տա Չաքարեան	19	..

ՆՈՐ ՆԻՒԹԵՐ ԵՒ ՀԱՐՑԵՐ

*անդամներ Յարս Թիւրք*

Տիկ.Մէհրան Չիչէքճի առաջարկեց որ յառաջիկային Միական Խորհուրդը կազմակերպէ դասախօսութիւններ Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութեան, խորհուրդներուն եւ աւանդութեանց մասին, նաեւ Հայց.Եկեղեցւոյ եւ միւս Եկեղեցիներու միջեւ բաղդատութեանց եւ յարաբերութեանց նուիրուած ասուլիսներ, առ ի լուսաբանութիւն հայ հաւատացեալներու:

Բրշ.Չմբուխտեան Ա.Սարկաւազ առաջարկեց փութով կազմել եկեղեցւոյ խնամակալ Տիկնանց Յանձնախումբ:

Տիար Ա.Մուրադեան թելադրեց Տիկնանց Յանձնախումբի կազմութիւնը յանձնել Միական Խորհուրդի հոգածութեան: Ընդունուեցաւ: Երիտասարդաց Մարմնի եւ Կիրակնօրեայ Կարողի կազմակերպումը եւս ձգուեցաւ Միական Խորհուրդի նախաձեռնութեան:

Տիար Ա.Գասապեան առաջարկեց ընտրել եկեղեցւոյ Դպրապետը: Այս հարցը եւս յանձնուեցաւ Միական Խորհուրդի կարգադրութեան:

Բարեշնորհ Չմբուխտեան Ա.Սարկաւազ ներկաներուն տեղեկութիւններ եւ լուսաբանութիւններ տուաւ Հիւս.Ամերիկայի Արեւելեան եւ Արեւմտեան Թեմերու մասին, ինչպէս նաեւ Թեմական Խորհուրդի, Մուխթարու, Միական Խորհուրդներու մասին: Ապա կոչ ըրաւ հասարակութեան ամէն կերպով նեցուկ հանդիսանալ եկեղեցիին, ծառայել անոր եւ օժանդակել որ եւ է ուղղակի աշխատանքով: Հրաւեր կարդաց զօրավիգ կանգնիլ նորընտիր Միական Խորհուրդին:

Ժողովը փակուեցաւ Պահպան Ամենայնի աղօթքով: *Կարճ Երեւան 1930*

ԴԻՌԱՆ Ա.ԱՆԴԱՄԿ.ԸՆԴՀ.ԺՈՂՈՎՈ

Ատենադպիր	Ատենապետ	Նախագահ
Լուիզ Գասապեան	Գրիգոր Ա.Սրկ. Չմբուխտեան	Տ.Գեղամ Մ.Վ.Չաքարեան
<i>Լուիզ Գասապեան</i>		<i>Պրոքուր Երեւան</i>
	<i>Օրհնութիւնք Ազգ. Երեւան</i>	

ARMENIAN CHURCH OF NORTH YORK

INCOME REPORT

REVENUE

Membership dues (129) ✓	3,225.00
Plate Collections	2,415.85
Donation for Special Reception	965.00
Donations & Youghakin	3,492.00

TOTAL INCOME 10,097.85

EXPENDITURES

Hotel	658.70
Stamps	317.52
Telephone	612.92
Vestment	200.00
Books	115.37
Fellowship	1,203.61
Church Rent	1,260.00
Advertising	726.80
Exent Expenditures	598.82

TOTAL EXPENDITURES 5,693.74 5,693.74

GROSS INCOME 4,404.11

RECEIVABLE MEMBERSHIP FEES \$2000.00

\$500.00 more for vestment will be paid by installment.



**Ն Ո Ր Թ Ե Ռ Ր Զ Ի Զ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Ձ  
Ա Ռ Ա Բ Ե Լ Ա Կ Ա Ն Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Ց  
Կ Ի Ս Ա Մ Ե Ա Յ Գ Ո Ր Ե Ո Ի Ն Է Ո Ի Թ Ե Ա Ն Ց**

**Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ի Ո Ի Թ Ի Ի Ն**

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԺԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

25 Մարտ 1982 թուականին, Թորոնթոյի Հ.Բ.Ը.Միութեան Ալէք Մանուկեան մշակութային կեդրոնին մէջ խորհրդակցական ժողովի հրաւիր-վեցան քաղաքիս խումբ մը ազգայիններ, նիւ-եորքի Հայց. Առաք. Եկեղեցիներու արեւելեան թեմի Առաջնորդարանի պատուիրակ առաջնորդական փոխանորդ հայր Յուսիկ Ժր. Վրդ. Պաղտասեանի կողմէ:

Այս ժողովին նպատակն էր, Թորոնթոյի շրջանին մէջ օրրստօրէ բազմացող հայ գաղութիս հոգեւոր սպասարկութիւն մատակարարելու համար երկրորդ եկեղեցի մը բացուի:

Սոյն խորհրդակցական ժողովին մէջ, յետ հանգամանակոր խորհրդակցութեանց, նշանակովի Առաջնորդական թիւ 27701, 22 Մարտ 1982 թուակիր հրահանգով, եւ հայր Յուսիկ Ժր. Վրդ. Պաղտասեանի ներկայութեան, կազմուեցաւ առժամեայ ծխական խորհուրդ՝ հետեւեալ կազմով. -

- |                        |            |
|------------------------|------------|
| Տիար Օննիկ Թորոսեան    | ԱՏԵՆԱՊԵՏ   |
| Տիար Վահան Մուրատեան   | ԱՏԵՆԱԴՊԻՐ  |
| Տիար Անդրանիկ Զաքարեան | ԳԱՆՉԱՊԱՀ   |
| Տիար Վահրամ Չիչեքճի    | ԽՈՐՀՐՊԱԿԱՆ |
| Տոբթ. Շահէն Ժամկոչեան  | ԽՈՐՀՐՊԱԿԱՆ |

Ունեցանք իբրեւ Հոգեւոր Մատակարար եւ ծխ. խորհուրդի նախագահ Բրշ. Գրիգոր Աւագ Սրկ. Զմրուխտեանը, իսկ Երաժշտապետ-Դպրատան Մթօ. Դաւիթ Վարժապետեանը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Առաջնորդ Սրբ. Հօր Տէր Թորգոմ Արքեպ. Մանուկեանի, եւ Թեմական խորհուրդի վաւերացումը ծխական խորհուրդիս ստանալէ վերջ, Եկեղեցիս ունեցաւ իր անդրանիկ Ս. Պատարագը, ծաղկազարդի Տօնին՝ Կիրակի 4 Ապրիլ 1982 թուականին, կաթողիկէ Ս. Լօրէնս Մարթիր Տաճարին մէջ:

Պատարագեց. եւ քարոզեց, Առաջնորդ Սրբ. Հօր կողմէ, յատկապէս Պոսթոնէն եկած Տէր Բաբկէն Աւագ Քրիստ. Մազսուտեան:

Այնուհետեւ, թեմ. խորհուրդի եւ Առաջ. Սրբ. Հօր տնօրինութեամբ, ամէս կիրակի առանց բացառութեան, ունեցանք արժանաւոր եկեղեցականներ հոգեւոր սպասարկութեանց եւ խորհրդակատարութիւններու համար, այսպէս՝

- |                  |                                       |
|------------------|---------------------------------------|
| 11 Ապրիլ 1982 Ս. | Զատիկ Տ. Բաբկէն Աւ. Քրիստ. Մազսուտեան |
| 18 Ապրիլ 1982    | Տ. Բաբկէն Աբեղայ Ասուշեան             |
| 25 Ապրիլ 1982    | Տ. Հայկ Քրիստ. Տօնիկեան               |
| 2 Մայիս 1982     | Գերշ. Տ. Բաբկէն Եպ. Վարժապետեան       |
| 9 Մայիս 1982     | ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ                  |
| 16 Մայիս 1982    | Տ. Ընծա Քրիստ. Նալպանտեան             |
| 23 Մայիս 1982    | Տ. Վարդան Քրիստ. Ժանկիւլեան           |
| 30 Մայիս 1982    | Տ. Ներսէս Քրիստ. Ժեպէճեան             |
| 6 Յունիս 1982    | Տ. Խաժակ Վրդ. Պարսամեան               |
| 13 Յունիս 1982   | Տ. Խաժակ Վրդ. Պարսամեան               |
| 20 Յունիս 1982   | Տ. Վարդան Քրիստ. Ժանկիւլեան           |

- 27 Յուլիս 1982 Բարեջան եւ Շինարար Առաջնորդ Տ. Թորգոմ Արքեպ. Մանուկեան
- 4 Յուլիս 1982 Տ. Վարդան քին. Մկրտեան
- 11 Յուլիս 1982 Գերշ. Տ. Բաբկէն Եպ. Վարժապետեան
- 18 Յուլիս 1982 Գերշ. Տ. Բաբկէն Եպ. Վարժապետեան
- 25 Յուլիս 1982 Տ. Միքայէլ քին. Պուլթերո
- 1 Օգոստ. 1982 Տ. Հայկ քին. Տօնիկեան
- 8 Օգոստ. 1982 Տ. Նուբհան վրդ. Մանուկեան
- 15 Օգոստ. 1982 Ս. Բաբկէնի Ուսուցիչ Ուսուցիչ Ս. Սեդրաք քին. Խաչատուրեան
- 22 Օգոստ. 1982 Շարունարկաբար Տ. Սեդրաք քին. Խաչատուրեան
- 19 Սեպտ. 1982 Հիւրաբար Հայր Արշակ Եր. վրդ. Խաչատուրեան

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս կարճ ժամանակամիջոցին մէջ Եկեղեցիս Ս. Պսակի արարողութիւններ եւ Մկրտութիւններ ունեցաւ:

Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի 63-րդ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԵՐԹ Ի ՆԻՒ ՊՐԻԹՇՆ - ՍՐԲ. ԱՌԱՋՆՈՐԴ ՆՕՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆ ԸՆ ԹՈՐՈՒՄՈՒ ԱՅՅԸ:

Վերոյիշեալ քսաներկու շաբաթներու մէջտեղը հասնող սիրակին - 9 Մայիս 1982 թուականին Եկեղեցիս Ս. Պատարագ չունեցաւ - Հիւսիսային Ամերիկայի Պատգամաւորական ժողովին, Հոգեւորականաց Խորհրդածոյովին եւ Առաջնորդական ընտրութեան պատճառով:

Այս ընդհանուր Պատգ. ժողովին նորթ եորքի Հայց. Եկեղեցիս յատուկ հրաւեր ստանալով, 4 ներկայացուցիչներով ներկայացաւ Նիւ Պրիթընի ժողովներուն: Անոնք էին՝ Բրշ. Գրիգոր ԱԼ. Սրկ. Զմրուխտեան, Տիարք Օննիկ Թորոսեան, Անդրանիկ Զաքարեան եւ ՄԹօ. Դաւիթ Վարժապետեան:

Սոյն Պատգ. ժողովը Առաջնորդութեան Պաշտոնի վերընտրեց Գերշ. Տէր Թորգոմ Արքեպ. Մանուկեանը, հինգերորդ քառամեակի համար: Յուլիսի ամսուն վերջաւորութեան, Սրբ. Հայրը ժամանեց Թորոնթո, Հովուական այցելութեամբ: Այս ուրախ առիթէն օգտուելով, նորթ եորքի Հայց. Առաք. Եկեղեցւոյ Եպ. Խորհուրդը կազմակերպեց Ս. Պատարագի արարողութիւն Առաջնորդ Սրբ. Հօր նախագահութեամբ եւ մասնակցութեամբ Եկեղեցւոյս Դպրաց Դասին, Հառուրտ ժոնսըն հիւրանոցի դահլիճին մէջ 27 Յունիս 1982 թուականին: Կատարուեցաւ Հոգեհանգիստ բարերար, եւ այլ ազգայիններու յիշատակին:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՉԵՌՆԱՐԿՆԵՐ

26 Ապրիլ 1982 թուականին, դասախօսական երեկոյ մը կազմակերպեցինք Ս. Երրորդութիւն քոյր եկեղեցւոյ ներքնասրահին մէջ: Գերշ. Տէր Տիրան Արքեպ. ներսոյեան խօսեցաւ Հայց. Առաք. Եկեղեցիներուն մասին:

18 Յուլիս 1982 թուականին, Ս. Երրորդութիւն քոյր եկեղեցւոյ Եպ. Խորհուրդին հետ միասին, կազմակերպեցինք ցուցադրումը, Ս. Էջմիածնի մէջ Եկեղեցականներու ցեղնադրութեան ժապաւէններուն, նախաձեռնութեամբ նախորդ երկու սիրակիներուն Եկեղեցւոյս մէջ Ս. Պատարագ մատուցող, Ուշահնկթոնի մէջ Հայց. Առաք. Եկեղեցւոյ Գերարքեպ. Գերշ. Տէր Բաբկէն Սրբ. Եպիս. Վարժապետեան:

*Առաջնորդ  
Եկեղեցի*

Անցեալ վեց ամիսներուն ընթացքին մասնակցեցանք զանազան ազգային ձեռնարկներու, այցելութիւններ տուինք ապաքինող ազգայիններու՝ հիւանդանոցներու եւ տուներու մէջ:

Կատարեցինք ցաւակցական այցեր մահացած ազգայիններու ընտանիքներուն:

15 Օգոստոս 1982 թուականին, խումբով մեկնեցանք Ս. Քաթերին, տեղուոյն Հայց. Առաք. Եկեղեցւոյ մէջ մասնակցելու Աստուածածնի վերափոխման Տօնին: Եւ խաղողօրհնութեան ականդական արարողութեանց ու Ս. Պատարագին: Այստեղ իր մասնակցութիւնը բերաւ նորթ եորքի Հայց. Առաք. Եկեղեցիս իր Դպրաց Դասի ամբողջ կազմով, ղեկաւարութեամբ Մթրօ. Դաւիթ վարժապետեանի:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՒ ՀՐԱԹԵՇՏ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ

Ուրախութեամբ կը յայտնենք որ Առաջնորդ Սրբ. Հայրը՝ Տէր Թորգոմ Արքեպ. Մանուկեան, թեմական խորհուրդի հետ միասին, նկատի առնելով Տէր Սեդրաք Քհն. խաչատուրեանի ցուցաբերած ուղիղ կեցուածքը եւ գործունէութիւնը հանդէպ Հայց. Առաք. Եկեղեցւոյ կանոններուն, միաժամանակ նորթ եորքի Հայց. Առաք. Եկեղեցւոյս խնդրանքը՝ կը վերահաստատէ իր քահանայական աստիճանը:

14 Սեպտեմբեր 1982 թուականին, Բրշ. Գրիգոր Ա. Սրկ. Զմրուխտեան մեկնեցաւ Պոսթոն քաղաք, ուսումը շարունակելու Հարվըրտ համալսարանի Աստուածաբանական ճիւղին մէջ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Փակելէ առաջ մեր այս հակիրճ տեղեկատուութիւնը, պարտք կ'զգանք շնորհակալութիւն յայտնել .-

Առաջնորդ Սրբ. Հօր՝ Տ. Տ. Թորգոմ Արքեպ. Մանուկեանին, Ազգային թեմական խորհուրդին, եւ Առաջնորդական փոխանորդ Հայր Յուսիկ Ծր. Վրդ. Պաղտասեանին, որ հայրական ջերմ հոգածութեամբ հովանաւորեցին եւ օժանդակեցին Եկեղեցւոյս գործունէութիւնը, կանոնաւորապէս ամէն կիրակի մեզի տրամադրեցին կարող հոգեւորականներ, ծուխիս բարգաւաճման համար:

Յատուկ ջնորհակալութիւն՝ Ս. Լօրէնս Մարթիր. Կաթողիկէ Եկեղեցւոյ վանահայր գերյարգելի Հայր Փերնային եւ իր փոխանորդ Հայր Փօլիին, որ Եկեղեցին տրամադրեցին մեր կիրակնօրեայ ծամերգութեան եւ Ս. Պատարագի համար, ծաղկազարդի եւ Ս. Զատկուայ արարողութեանց վարձքերը նուիրելով Եկեղեցւոյս:

Շնորհակալութիւն Պոսթոն Գամպրիճի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ եւ թեմական խորհուրդի Ատենապետ՝ Տէր Մամբէ Գուգուեանին որ Եկեղեցւոյս տրամադրեց Եկեղեցական սպասներ, եւ դպրաց դասի շապիկներ:

Շնորհակալութիւն Տիթրոյտի հոգեւոր Հովիւին Հայր Բարէն Վրդ. Աւետիքեանին, որ սիրահոժար տրամադրեց կրտսեր դպրաց դասի շապիկներ, Եկեղեցական գիրքեր եւ շուրջառ մը:

Շնորհակալութիւն նաեւ, մեր նորահաստատ Եկեղեցիին մէջ, անձնուիրաբար Ս. Պատարագ մատուցող Կղերականներուն եւ Սարկաւազներուն:

Շնորհակալութիւն Բրշ. Գրիգոր Ա. Սրկ. Զմրուխտեանին, որ անխոնջ եւ անտրտունջ նախագահեց ու Հոգեւոր Մատակարարութիւն տուաւ ծուխիս:

Շնորհակալութիւն Տէր Սեդրաք Քհն. խաչատուրեանին որ իր Կղերականի կարողութիւններով պատիւ կը բերէ մեզի:

Արդար է որ յատուկ շնորհակալութիւն յայտնենք, ամէն կիրա-  
կի եկեղեցական երգեցողութիւն կատարող Դպրաց Դասին եւ իր տաղանդաւոր  
ղեկաւարին Մթրօ. Դաւիթ վարժապետեանին:

Շնորհակալութիւն քոլոր այն հաւատացեալ ազգայիններուն,  
որոնք մօտէն հետեւեցան մեր զործունէութեանց եւ օժանդակեցին Եկեղեց-  
վոյս, նիւթապէս եւ բարոյապէս:

Շնորհակալութիւն Ս. Երրորդութիւն քոյր Եկեղեցւոյ ծխ. Խոր-  
հուրդին, նաեւ այլ կազմակերպութեանց վարչութիւններուն, որ սերտ գոր-  
ծակցութիւն ցուցաբերեցին Եկեղեցւոյս:

ԾՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ՆՈՐԹ ԵՈՐՔԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

*Արեւմտապէր*  
*Վահան Ռոբարտեան*  
*Վահան Ռոբարտեան*

*Արեւմտապէր*  
*Օրմիկ Բոբարտեան*